

որ իհարկէ նոցա ազգութեան եւ ազգային շահուց ներհակ պիտի դարձունաւ եւ անշուշտ պիտի սխալաւորուէին Հայաստանեայց եկեղեցւոյ անձնանուէր պաշտօնէից եւ անդամոց դէմ սպառազինութեամբ ամեն կերպով մարտնչելոյ:

Արդ ի ինիք բանիս դժուար չէ եզրակացնել նաեւ, որ Հայոց մէջ Աղեբալան Բէկ և Կարապետ Բէկ երեւակայելն՝ կամ Կարապետ Բէկ օտարաց արձագանք լինել կրնանակէ: Եւ կամ այսպիսի գաղափար տածել եւ տարածելն արդար օրաց և Կարապետ Բէկի հետ, ուստի մի որ լինի եւ ինչ տեսակ տեսութիւն եւս բացատրել նկրտի, իզուր կընայ Հայոց մէջ վտանգաւոր Աղեբալան Բէկ և Կարապետ Բէկ երեւակայելոյ եւ խտրութիւն արկանելոյ համար: Եւ հակառակը խօսելով՝ եթէ լինի եւս, ո՞վ կարող է հաստատել եւ ավացուցանել՝ զի Հայոց կղերական ոգին կամ եկեղեցականք կընան Հայութիւնը տապալելոյ՝ մինչդեռ այժմ Արծն (կամ Կարապետ Բէկ) հարուածել անգամ ջանալն՝ իրօք եւ անշուշտ զՀայութիւն եւ Հայաստանեայց եկեղեցին կործանելոյ կառաջնորդէ: զոր ո՞վ կարող է ժխտել՝ եթէ ողջամտութեամբ եւ քաջ գիտէ Հայութեան եւ Հայաստանեայց եկեղեցւոյ ներկայ վիճակը եւ անհրաժեշտ պէտքը և ուսուցանել:

ԱՆՏՐԱՔ ԱՄԲԱՊԵՏ ՄԱՆՈՒՆԻ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՆԱԾԱՅ, ՈՒՐԱՅՈՂԱՅ, ՀԵՐԶՈՒԱԾՈՂԱՅ ԵՒ ՌԱԺԱՆԵԼՈՅ ՅԵՎԵԴ, ԵՑԻՈՅ ՀԱՅՈՅ. (Շ-ր-ն-ի-ն-ն):

ՅՈՂ. ԻՄ:

Յոսեփ Կարապետ Հայոց, Կարապետ Բէկ 25:

(Ամբ Տեառն 908): Իննետասնևորդամ էր Թագաւորութեան Սմբատայ Առաջնոյ՝ որդւոյ Աշոտայ արքայի Ռազրատունեաց, յորում ժամանակի քեռորդի նորա Գագիկ Արծրունի՝ յաղագս հայրենի ժառանգութեան՝ Կախիջեան քաղաքի՝ ապստամբեալ ի նմանէ՝ զնայ յԱտրպատական բազում ընծայիւք առ ոստիկանն յուսուփ, որում հարկս հարկանէր աշխարհս Հայոց յանուն ամիրայետին՝ և Թագաւորեալ ի նմանէ ի վերայ տանն Արծրունեաց՝ կարի գծամենցոյց զոստիկանն ընդ դէմ Սմբատայ արքայի, որովք և աղմուկ և խռովութիւն յաշխարհին մեծ յոյժ: Ընդ որ զահի հարեալ արքայի և նախարարաց միաբան եղելոցն ընդ նմա՝ իբրեւ առաքին ի հաշտութիւն ընդ ոստիկանին զՅովհաննէս Աթուղիկոս բազում և մեծագին ընծայիւք՝ ևս և յուխտ խաղաղութեան, նա ընկալեալ պատուով ի վերին երեսս զՀայրապետն՝ կապէ ապա ի բանտ խաւարին՝ իբրեւ զգաւաճան ոք՝ սպառնացեալ՝ տալ նմա զկարիս բազում: Իւրինքն ընդ մերումս հակառակաթու արքային Գագիկայ և եղբօր նորա Գուրգենայ՝ որ հազարապետն էր արքայի Սմբատայ ի վերայ Հայոց աշխարհին՝ զօր մեծ գումարտակ արարեալ՝ գայ ընդ

դարնանամուտն՝ ի Ասիսիսեան քաղաք՝
խողալ անտի ի վերայ աշխարհին Արմ-
բատայ. ուր ածէ ընդ ինքեան և զկա-
պեալն Հայրապետ՝ զՊատմագիրն Յով-
հաննէս Օւրդ. անդ կոչեալ առ ինքն ոս-
տիկանին՝ զՎազգիկ և զՎուրգէն հան-
դերձ զօրօք իւրեանց, զգօրսն տրոհեալ՝
մտին զառաջինն յաշխարհն Աիւնեաց:

Այլ որ անդէն Վրիդոր Սուփան նախա-
բար Աիւնի որդի Վարուռն Աւասակայ՝
քեռորդի արքային՝ հանդերձ եղբարք
ժողովեալ զգօրս՝ զանցս մտիցն ճանա-
պարհաց կալեալ ունելով՝ սրոյ ճարակ
տան զբազումս ի զօրացն Յուսփայ. այլ
վասն զի այցելութիւն Տեառն անտես
արարեալն էր զնոսա ըստ Յովհանն. Պատ-
մաբանին, վասն անմիտարան լինելոյ նոցա
ընդ թագաւորին իւրեանց, չկարելով
և ևս զղէմ ունիլ ասպատակացն՝ ան-
կանէին յամուրս քարանձաւաց. և նոցա
յարձակեալ ի սահմանս նոցին՝ կոխան
արարին զաշխարհն Աիւնեաց. և զորս
միանգամ արտաքոյ քաղաքաց գտանէին՝
էր զոր կոտորեցին, և էր՝ զորս ի գերու-
թիւն վարեցին (909)՝ յաւուրս տօնի
մեծի Օգոստին:

(Ամբ Տեառն 910): Օկնի այսորիկ
իրբե լինէր ոստիկանն ի Վուրն՝ առ ի ու-
նել խաբէութեամբ զԱմբատ՝ էառ հարկս
ի նմանէ՝ զահեկանս վաթսուոն հազար. և
առժամայն մղեալ զգօրս ի Շիրակ գա-
ւառ, փախուցանէր զարքայ հետամուտ
զօրօք մինչև ի ձորս Աղարջաց գաւառին
յաշխարհն Վուրգարաց, և յարձակեալ ի
քաղաքս իշխանութեան նորա՝ կոխեաց
և մանրեաց զորս և զիստ արտաքոյ՝ և յա-
ւուրս զարձուցանէր զաշխարհն. և զամուռն

ողջոյն շրջեալ ի կողմն ինչ Հայաստա-
նի, յաւերել և ի քանդել գիւղս և զա-
ւանս, գառնայ ի Վուրն: Աւ անդ իրբե
պակասէր ոռձիկ զօրուոն, սկսաւ այնու-
հետե կեղեքել զնախարարսն ընդ իւր
եղեալս, որպէս և զՎազգիկ և զՅովհան-
նէս Աթուղիկոս՝ զոր առ իւր ի բանտի
ունէր, զորմէ և ինքն գրէ *). և ի պա-
հանջել ոստիկանին ի Հայաստանէն գանձս
ոսկւոյ և արծաթոյ՝ ժամ չիպող զըս-
եալ ինքեան՝ ինդրեաց զազատութիւն առ
ի ժողովել և բերել առ նա զգրամս. ար-
ձակեալ ի բանտէ և ոչ ի կապանաց՝ ժո-
ղովէ ըստ կարի զարծաթ և առաքէ առ
ոստիկանն. որով և գտեալ ապահովու-
թիւն՝ փախստեայ անկաւ յԱղուանս առ
մեծ իշխանն Սահակ և առ թագաւորն
Աղուանից Ատրնէրսէհ: Իսկ ինքն ոստի-
կան՝ որ առ իւր զնախարարսն Հայոց ու-
նէր, հանապաղ ընդ նոսա ի խորհուրդ
մտանէր թէ՛ որպէս ի Ամբատ արքայ դնի-
ցեն զորոգայթ բանիւք՝ այս ինքն ձեր-
բակալ առնելով:

Ապա իրբե գարուոն հասանէր, զօրք
Յուսփայ և Վազգայ՝ ոյր և ձեռամբ և
նորին նախարարաց պատերազմեալ ընդ
զօրաց Ամբատայ արքայի ի Աիդ գաւառին

(*) «Արեցի այնուհետե, ասէ, ի գահաց ան-
տի մահահոտ իմն լուսանօք գանս և բանտս
«և գեղարանս և արգելարանս ի խաւարչտին տե-
«ղւոջ և յանձուկ վայրս: այլ և ի վերապս և ի
«վիհս խորոց ընկեցայ սաստիկ և դառն կտա-
«նօք: Եւ պահապանացն սաստիկ աղաղակն և
«ծիչն դատափետ ոչ հեռացեալ հատանէր ի
«լսելեաց իմոց յերեկորեայ մինչև ցառաւօտն.
«և սակս այնորիկ բարձեալ էր յինէն նինջ ար-
«տեանաց և հանգիստ իրանաց իմոց»:

ի Չկիսավաճառ կոչեցեալ տեղին, որոց զօրավարէին երկոքին որդիք արքայի՝ Աշոտ և Սուշիկ. թէև հարուածս անակնունհ լիս հասնօցին ի զօրս ոստիկանին, մինչև ահարկիկ բովանդակ երկու ց զնդից նորա՝ ի ձեռաց երկուց քաջացն եղբարց, բայց ի լքանել Աւորդեացն ի զօրաց արքունի, Աշոտ ձեռքեալ զդունդ թշնամեացն՝ ածապարի ի փախուստ, և Սուշիկ՝ որ ըստ եղբօն օրինակի ածապարեալ էր ի փախուստ անհնարին քաջութեամբ հարկանելով զթշնամին, բայց ձերբակալեալ ի դարանկոցն Աւորդեաց՝ ածեալ լինի առ Յուսուփ:

Ընդ այս ոչ սակաւ խնդութիւն ցուցանէր ոստիկանն՝ յանձին, իբր թէ կործանեալ իցէ սին մեծ զօրութեանն Արմբատայ, որ և ստիպով մեծաւ ի դունդս գունդս զեւր և զՎազկայ զօրսն բաժանեալ՝ ասպատակ տիրէ ընդ ամենայն Հայաստան. որոց իբրև հօւր հրդեհեալ յաւանս և ի գիւղս և յանպարիսպ քաղաքս՝ յաւեր և յաղականութիւն փարձուցին, զեկեղեցիս կողոպտեցին, և զբազումս ի նոցանէ հրով այրեցին, և զոմանս քանդեցին. և զորս մեանդամ գտին զարս և զկանայս, զաշխարհականս և զեկեղեցականս, զաղքատս և զմեծատունս, էր՝ զորնս զերեւելն, և էր՝ զորս սրով սպանին. ի գերութեանց աստի և ի հարուածոց՝ զերծանէին որ անասիկ քաղաքք և անմասն չլի բերդք էին ասպաստանարանք մարդկան աշխարհին: Աւ որովհետև այնոքիկ քաղաքք ևս ի վտանգ չարեացն կային, անտի ևս խոյս տուեալ ասպատանելոցն ի լիւրնս և ի խորս ձորոց՝ խոտովք և արմատովք կերակրէին. և բազմաց փափկա-

սունք գողով և իշխանադունք՝ չտանելով տառապանացն՝ անդէն և մեռանէին՝ իսկ որ ի նախարարացն էին առնոսա՝ բազումք կամակար անձնատուր եղին ի Յուսուփ, գործակիցք նմին լեալ՝ և ոչ Արմբատայ արքայի, յորս երեւելքն էին չքնոյդպեղ պատանին Աստակ որդի Աշոտայ Ախականի, և գեղեցկատեսին Ամբաս որդի Սահակայ եղբօր արքայի. և փոխանակ բարեոյ առ յոստիկանէն՝ չարիս անձանց նիւթեցին ի նմանէ. քանզի ի մաի եղեալ Յուսփայ՝ զամենայն նախարարսն Հայոց կորուսանել, սուտ ասածառանօք զոմանս կապեաց, և խեղդել ևս զնոսա լռելեայն. և զայլս մահապարտ ցուցեալ՝ յայանապէս սպան. և զկէսս գանիւ և սովով կորոյս. և զորս երեւելիսս ի նոսին՝ զորոց և կասկածս ցուցեալ էր՝ մի մի կորուստներ, որպէս զՍուփանն կոչեցեալ Վրիգոր Ալենի՝ քեռորդի արքային Արմբատայ՝ զանձնատուր եղեալն յառաջագոյն՝ ի դեղ մահու սպանեալ՝ չքմեղս եղև և հրամայեաց թաղել զնա յեկեղեցւոյ սրբոյն Արմնի: Յեա նորա ասպա և ձերբակալեալն Սուշիկ կորովի զորդի արքայի՝ գանիւ և սովով տանջեալ յուրացութիւն հաւատոյ՝ դեղով մահու բառնայր ի կենաց, թաղեալ զմարմին նորա ի Վազարան առ հարցն գերեզմանի՝ Աշոտոյ սպարապետի եղբօրորդւոյ արքայի, այսու մահումբ վճարի ի կենաց՝ յոստիկանէն և երիտասարդն Ամբաս որդի Սահակայ եղբօր արքայի. զոր Վազկի արքայ խնդրանօք թաղել ապա ի Վարոնս: Աւ պատանին Աստակ՝ որդի Աշոտայ Ախականի՝ ընդ Ամբատայ կալանաւորեալն ի բանտի՝ չգտեալ հնարս ազատութեան

յոստիկանէն, յանկարծակի իբրեւ ցոյտեալ գիշերի յարդիւնացն՝ փախտանայ անկանի յաշխարհ իւր ի Ախտկանս:

(911.) — Սահակ և Վասակ Արևելք տեսեալ զասպատակսն հեղեալ յերկիր իւրեանց, և լուեալ ևս զմահ կորոր իւրեանց Սուփանն Վրիգորի՝ և զայլոց նախարարացն, առեալ զամենայն աղիւ տան իւրեանց՝ զիմէին ի ծովակն Վեղամայ՝ որ էր յիշխանութեան իւրեանց. ու բնաւակս և լաստս յարդարեալ՝ մտին ի Աեան կղզի, բայց ոչ անագան պաշարեցան ի հինից ասպատակաց ըստ հրամանի ոստիկանին. վասն զի լուեալ զփախուստ նոցա՝ առաքելին ոստիկանն և Վազկի զօրս զինի նոցա. որոց եկեալ և չեւս պատրաստական ի կղզին մտեալ՝ նոքա ամենայն աղխիւք՝ ածապարեալ ելին յայն կողմն, և յետոյ իգալստեան ասպատակաց զհետ իւրեանց՝ հարուածեալ զնոսին՝ անցին զաղարեցան ի դաւառին Վարդմանաց յԱւտի աշխարհին:

Ընդ այս դառնացեալ Յուսիփայ՝ վերջոտին սփռեաց զասպատակ յաշխարհն Արևեաց և յեղր Ծովակին Վեղամայ, ուր կային բնակիչք, և ի կողմանս Տաշբուս և Վանգարաց՝ աւար հարկանել զերկիրն ամենայն և զազգն մնացեալս՝ առնել ձառքաղ: Աւ ինքն խորհոյ լի արարեալ ընդ Վազկայ և ընդ մնացեալ նախարարս Հայոց առ ինքն՝ առաքեաց և զնոսա զօրօք ի վերայ Վաղարշակերտ ամրոցին՝ առնուլ զայն. ուր և խոստացեալ էր Վազկայ զնալ ոստիկանին և զհանդէս թագաւորութեանն կարգել, և զիւրաքանչիւր նախարար յիշխանութիւն մեծ

հաստատել՝ և դառնալ ինքեան յաշխարհ իւր:

Խաբեալ Վազկայ և նախարարաց ի դաւաճան միտս ոստիկանին, գնան և զօրօք փակեն զՎաղարշակերտ. բայց իբրնակչաց այնորիկ ընկալեալ զհարուած աստիկ ի զօրս իւրեանց, մեծապէս խայտառականօք դարձան ամօթով առ ոստիկանն յետս:

(913.) — Յետ այսորիկ ըզձացեալ Յուսիփայ զլեռովն տիրել բոլոր աշխարհին՝ ջանայր ձերբակալել զՍմբատ, և յայս գործ դաւաճանութեան՝ նենդութեամբ խոստացեալ Վազկայ թագաւորի ցուցանել ի վերայ Հայաստանեայց, յամենայնի առնէր զնա ինքեան գործակից՝ զի զարքայ սպանցեն: Ապա ժողովեալ զամենայն զօրս իւր և զՀայոց՝ զոր ի ձեռին իւրում՝ խաղաց ընդ դարնանամուտն ի վերայ Սմբատայ հանգերձ Վազկաւ և Վուրգենաւ՝ յամրոցն Ապուլուայ, ուր նստէր Սմբատ փոքու զօրօք: Աւ իբրեւ ի պատերազմին յառաջ մատուցանէր Յուսուփ զզօրս Հայոց՝ և յիւրսն խնայէր, որք զհարուածս ոչ սակաւ ընդունէին ի կորովեացն նետաձգողացն ամրոցապահաց, արքայ Սմբատ խնայեալ ի կատորածս Հայոց, որք միայն վասն իւր զայնչափ աղէտսն թշուառութեանց կրէին, հոգացեալ վասն փրկութեան նոցա, և զհարուածսն զաղարեցուցեալ խնդրեաց յոստիկանէն յետկար երդման՝ խնայել յինքն և ի զօրս իւր, և ապա անձնատուր եղև նմա: Աւ յայնմ հետէ ապա թիւ իսկատուր ունէր զնա առ երեսս, բայց օր աւուր խորհէր սպանանել զնա: Աւ զի այսմ գիտակ էր և արքայ, հեռացաւ ի նմանէ սրատճառաւ իւրիք ի

Շիրակ դաւառ, մինչև ցաւուրան ցայնո-
սիկ, ուրանօր փախեաւ և Վաղիկ հան-
դերձ Վաւրգէնաւ եղբարբ իւրով: Ընդ
որ զանգիտեալ Յուսփայ, թէ մի՛ գուցէ
զնացեալ միաբաննոցին փախստեայքն ընդ
Սմբատայ, կապեաց ի շղթայս՝ առ իւր ե-
ղեալ զնախարարն Հայոց, և յետ սակա-
ւուց հրաւիրեալ առ ինքն և զՍմբատ՝
կապեաց և զնա ի շղթայս և եղ ի բանտ
խաւարային ի Վուին քաղաքի: Յորեկաց
զամ մի ողջոյն, ուր և զպէսս կենաց խը-
նայէին նա, զի հնարէին դարձուցանիւ
զնա ի հաւատոց:

(914.): — Եպա յորժամ դիմէր զօրօք
ոստիկանն ի վերայ ամրոցին Արնջակայ ի
Վաղթան դաւառի, էած անդր շղթայիւք և
զՍմբատ. զի զօրեալ էին յամրոցին բաց ի
բնակչացն՝ և տիկնայք երեւելեաց Հայոց,
որպէս մայրն Սմբատայ Սիսակեանց, և
կին նորա՝ որ քոյրն էր Վազկայ բռնաւո-
րի, և կին Սահակայ եղբօր նորին Սմբա-
տայ, և այլ ազատ կանայք և բազում
որդիք նախարարաց. որոց ոչինչ կարա-
ցեալ ստնանել ոստիկանն անօրէն, տան-
ջանօք հրամայէ չարչարել զՍմբատ Եր-
քայ յանդիման եղևոյն ի բերդին, ուր
յետ բազում խոշտանդանաց՝ սրով հա-
տեալ զղլուի երանելի Երքային՝ զմարմին
նորա ածեալ ի Վուին՝ բեւեռն ի խաչի ի
նախատինս Եղգին, ըստ հրամանի Սաթի-
կանին, որպէս և լիօրէն գրեալ է ի վարս
իւր ի հատորն 5:

Իսկ զամրոցն դաւանօք իմն ի ձեռս ա-
ծեալ ոստիկանին, արարին անդէն կոտո-
րած սարսափելի, մինչև ի ծագել արեգա-
կանն՝ կարմրացեալ երեւէր քաղաքն ա-
րեամբ սպանելոյ. և ի մնացելոց զգեղեցիկ

և զառոյգան գերեցին հանդերձ կանամբք
և որդուիք մեծատանց, և զքաղաքն ող-
ջոյն յաւարի առեալ՝ չուեցին ի Վուին.
ուր և կրեցին զնեղութիւն և տառապա-
նըս, որպէս վկայէ պատմարանն. « Եւան
գանձք նոցա, և աւար հարան զարդք և
կազմուածք տանց նոցա. և այսպէս կոծ և
ազաղակ և կականուի և ճիչ բազում
յապարանս նոցա լսելի լինէր:

(916.): — Ընդ զօրծս քաջութեանց Ե-
շոտոյ որդւոյ արքային Սմբատայ, որ կալա-
միով զաթոռ Թադաւորութեան նորա,
ամալ յառաջ, զչարեալ Յուսփայ ոստի-
կանին, (որ իսմին ժամանակի նստէր յաշ-
խարհ Ետրպատական), զորս արարնա ի վի-
րայ զօրաց իւրոց եղևոց ուրեք ուրեք յաշ-
խարհին Հայոց, զօրս ընդ ձեռամբ ունէին,
յամենայն կուսակալութեանց պարսից և
Ետրպատականի զօրս հանեալ առաքեաց
ստպատակութեամբ ի Հայս դարձեալ կո-
տորել և գերել զազն համօրէն և աւե-
րել զաշխարհն, զի ժամ դիպող համա-
րեցաւ զանմիաբանութիւն Հայ նախա-
բարաց:

(917.): — Մտին ի Հայաստան զօրք
յուսփայ և կուսակալացն պարսից, և յար-
ձակեալ յաւանս և ի գիւղս, զոմանս սրոյ
եռուն ճարակ, զոմանս վարեցին ի գերու-
թիւն, և ի գերեցոյ զճերս և զպառաւու-
նըս ընդմէջ կտրէին, և զաղայս սաըն-
դեայս ի զրկաց մարցն հանեալ՝ զգետնի
հարկանէին. զյղիսն ընդ ոտիւք կոխուե-
ին և զոմանց պատառեալ զօրովայն, ըզ-
յղացեալն ի բաց կորդեալ՝ արտաքս ըն-
կենուին. զմանկունս ի հարց և զեղբարս
ի հարազատից բաժանէին. զկին յառնէ և
հարսն ի սկեսրէ յափշտակէին. յօրս էր

տեսանել, առէ Յովհաննէս Աթուղի-
կոս, տեսութիւն ողորմելի, և ողորման-
հանդուրժելի, և լալումն անտանելի, և
բախումն կրծից և կքումն արտեանաց, և
զոգումն անձին և ցրտումն դեղոյ և խը-
զումն հերաց, և Լուսնայէս ուր ուրեք և
ոտք կոսեցան նոցա, զնոյն անցս անցու-
ցանէին բաց յայնոցիկ՝ որք փախուցեալքն
էին յամուրս ամրոցաց և քաղաքաց: Աղբա
և առ պահասելոյ կերակրոց՝ զգերեալն բա-
զումս նոթիս ի մահ հասուցանէին, և առ
գարձուցանելոյ ի հաւատոց՝ դառն տան-
ջանօք զնոսա սպանանէին, զոմանս կին-
գանւոյն թաղէին, և զոմանս ընդ բեռամբ
ծնէին, և զայս պրկեալ խեղդէին, զիէսս ի
կրծոց ի վայր օրով ձեղքէին, և զշատս ևս
յոտից և ի ձեռաց ծայրատէին, և էր՝ զի
զոմանց զոտս և զգլուխ ի մի պրկեալ՝ այսր
անդր գարձուցանէին, և սրով ընդ մէջ
կտրէին. էր՝ զորս յերկիր տարածեալ՝
արջառաջօք յորովայն և ի կողս հարկա-
նէին և ի քարշ յածեցուցանէին ցաւան-
դիւ շնչոյն. և էր՝ զորս ըստ իւրաքանչիւր
անդամոց՝ կացնով ջարդէին, զորս ընդ
մեռեալս կենդանւոյն թաղէին և զորս զըլ-
խովայր զծառոց կախեալ գանէին:

Իսկ զորս և ի գերեզմոցն ապրեցուցին ըզ-
գեղեցիկս և զառոյգս զարս և զկանոյս ըստ
ոստիկանին հրամանի, ածին առ նա ի Դը-
ւին. ընդ որս քաղցրութեամբ խօսեցեալ
նորա առ ի գարձուցանել զնոսա ի հա-
ւատոց, խոստմամբ մեծամեծ պարգևաց
ևս և գարձուցանելոյ ինքեանց զստաց-
ուածս նոցին, և տեսեալ եթէ հաստա-
տուն կան նոքա ի հաւատս, պէսպէս
տանջանօք խողխողեաց զնոսա սրով: Յայս
տանջանս մատուցանէր ոստիկանն և զա-

մենեան զնոսա՝ որք յասպատակացն ի-
րոց հեռոցհեռէ կապանօք անդր ածեալ
լինէին ի կողմանց կողմանց աշխարհին Հա-
յոց: Ի սոսա էին եղբարք երկու ի Վանու-
նեաց ազգէ՝ Վաւրթ և Վաւրդէն, որոց առ
գեղեցկութեանց և երիտասարդ հասա-
կացըն վայելչութեանց՝ ոչ երբէք զի-
ջեալք ի հրապուրանս ոստիկանին և ի
պարգևան երկրաւորս՝ ուրացողութեամբ
հաւատոց, և յազաւանս ևս նորա, այլ
անխախտ հաւատով խոստովանելով ըզ-
Վրիստոս՝ կատարին ի հրապարակի քա-
ղաքին առ աչս բազմութեան ժողովը-
դեան: Ի սմին անցս չարչարանաց մա-
հու աշխարհիս մերոյ՝ և ոմն ի կուսա-
կալաց Յուսիպ զբազմութիւն գերեաց ի
մի խումբ արարեալ իբրեւ պսակ բոլորածն,
յորժամ ոչ լսէին նոքա յորդարանաց ու-
րանալ զհաւատս, և շուրջ զնոքօք ընթա-
ցեալ՝ հրամայեաց հատանել զգլուխ նո-
ցին, մանուկ ելով ի նոսա ոմն Սիբայէլա-
նուն հովնեւտասն ամաց ի Վաւրդարաց աշ-
խարհէն, յափշտակեալ ի զօրականէն ի միջոյ
խմբին, առ զուարթածաղիկ պայծառութեան
գիմացն, ոչ կամեցեալ նորա զա-
տանիւ յընկերացն երանելեաց, վերստին
անկանի փախստեաց ի նոսին և ընդ նոսա
կատարի. որոց կարգեցաւ տօն յիշատակի
ի Իշ Մարերի, որ է ի յունիսի Յ, որպէս
գրէ Յովհաննէս Աթուղիկոս:

307. ԻԲ.

Յակոբ և Խոսրով հեղեալ Դպիտակոս
Անեւաց:

(943.) — Յաւուրս Բնանիայ Հայրա-
պետի Մովսէսոյ, որ եկաց Աթուղիկոս

յԱզիթամոր յետ Աղիշէի. Յակովբ Լ-
պիսկոպոս Արեւնեաց ուշխարհին՝ համա-
խոհ ինքեան արարեալ զԽոսրով ամն
քորեպիսկոպոս, յարեցաւ յաղանդա-
ւորս Թոնգրակեցւոց, և զբազում անտո-
վոր ծէսս եմոյծ յԱզիզեցիս Հայոց, յորս
և սերմանէր զբազում բանս մոլորա-
կանս. յորոց մին էր և այս, թէ չէ պարս
Լպիսկոպոսաց հնազանդել Կաթողիկոս
ոին՝ իրրե վեհագունի քան զինքեան, ո-
րով և յարուցանէր զխոսովութիւն բա-
զում:

Հասեալ այս ամենայն յականջս Ենա-
նիս Կաթողիկոսի՝ գրէ առ Յակովբ եպիս-
կոպոս ի բաց կալ յայնպիսի մուր վար-
դապետութենէ և յանսովոր ծիսից. այլ
իբրեւ ետես Հայրտպետն, եթէ նա ինքն
Յակովբ Լպիսկոպոս պաշտպան և ապա-
ւէն ինքեան արարեալ զգշեոյն Արեւնեաց
զկինորդոյ Վասակայ Արեւոյ՝ արհա-
մարհնաց զբան նորա, և ապստամբեալ
յինքենէ՝ ապստամբեցոյց ընդ ինքեան և
զբազումս և զմանս ևս յիշխանաց Արե-
ւնեաց, նզովեաց զնա ինքն զՅակովբ Լ-
պիսկոպոս, և գրեաց առ զշեոյն Արեւնեաց
տալ զնա ի ձեռս իւր. և իբրեւ զշեոյն ոչ
լինէր յանձնառու, նզովէ և զնա հանդերձ
իշխանօք Արեւնեաց: Որ և յետ վաղձանին
Յակովբայ՝ գնացեալ ի Արեւիս՝ քարո-
զութեամբ գրաւեալ զմիտս իշխանաց՝
արձակէ զնոսա ի նզովեցն կապից. և ձեռ-
նադրէ նոցա Երբեպիսկոպոս՝ զՎահան
ի գաւառէն Բաղաց:

804. 19

Թէեւ ուրեքն հակառակութեամբ իմանալէս
(1035.) :— Յովհաննէս-Սմբատ Երբայ՝
որ և զԵնին վաճառեաց, գթամնեալ ի վերայ
ընդերկար տարակացութեան Պետրոս
Հայրապետի յԵնոյ՝ որ Վեառաբաճն
կոչուր, նոյնպէս և նախարարք Հայոց,
յորժամ խաբանօք իմն կալաւ զնա և եղ ի
բանտի, ածեալ յԵնի քաղաք զՎանա-
հայր Սանտահնի վանաց զՎեոսկորոս, կա-
ցոյց զնա Կաթողիկոս փոխանակ Պետրո-
սի. բայց ոչ ընկալեալ երեւելի Լպիսկո-
պոսաց Հայոց զԿաթոլիկոսութիւննորա
յոդազսկենդանի գորոյ օրինաւոր Հայրա-
պետին, և ոչ լոկ զանուն Վեոսկորոսի թող
եառն յիշել յԱզիզեցիս ի սուրբ Պա-
տարաղի, և ոչ ձեռնադրել զոք յԼպիս-
կոպոս. յայս առիթ և ժողովուրդ երկրին
չէին հաճեալ ընդ նա, բայց եթէ արքայն
և նախարարք իւր:

Յայս ամենայն անարգութիւն յաչս այ-
լոց՝ զչարեալ և Վեոսկորոսի ընդդէմ մա-
խացողաց՝ սկսաւ և ինքն գործել զանար-
ժանս. կոչեաց զբազումս յանպիտանեաց և
ի վատթարաց յԼպիսկոպոսութիւն, և զո-
րըս արժանիքն էին, ընկից յիշխանութենէ,
և յափշտակեաց զստացուածս նոցա, և
զմեծեալսն վասն բանի յանցանաց՝ դար-
ձոյց յաթոռն իւրեանց. որովք և անկաւ
ընդ նզովիւք ի ժողովոյ Լպիսկոպոսաց և
վարդապետաց Հայոց՝ ինքն և կուսակիցք
իւր՝ թագաւորն և նախարարք՝ որք եղին
պատճառք չարեացս ամենայնի և ընկեցին
զՊետրոս՝ զսրբաւնեալն վարուք:

Ի բանիցս յայսցանէ երկուցիալ Արքայ
 և նախարարքն՝ իրրե Պետրոս Հայրապետ
 ոչ յանձն էառ վերստին զԵթուն ըստ
 թախանձանաց նոցա, (1036թ.) հրաւի-
 րեցին զՅովսէփ Աթուղեկոս Աղուանից
 հանդերձ Ապիսկոպոսօք իւրովք, և ար-
 քայն ժողով արարեալ Ապիսկոպոսաց,
 Վարդապետաց և կրօնաւորաց յԱնի քա-
 ղաքի, որպէս ասացեալ է մեր ի պատմու-
 թիւն ժողովոցն ի հատորն 5, անդ պար-
 տաւոր դատեն զՎեոսկորոս, և ընկեցեալ
 յԵթոնոյ իշխանութեան՝ պատառնէ ըզ-
 Վօղն զոր ընդ զլեով կրէր ըստ սովորու-
 թեան ժամանակին, զոր և յաքսորս առա-
 քեցին ի վանս իւր ի Սանահին, և ածեալ
 վերստին զՊետրոս յաթուն՝ եղին ի վե-
 րայ ամենայն ձեռնադրելոցն առ ի Վե-
 սկորոսէ, զապաշխարութիւն՝ ընդ բանիւ
 առնելով զնոսա:

(Ի յԵրեմիայ)

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ՀՌԻՓՍԻՄԷ:

(Սեղեւ իւրէն ճաշորդ)

Գիշերուան երրորդ ժամն էր, ըստ ար-
 քունի վայելչութեան, ժողովուրդը հար-
 սանեաց հանդէսը կկատարէր: Նոյն գի-
 շերը Վահագնի մեհենին մէջ նորա
 բազնին առջև Հայոց թագուհին պիտի
 ներկայանար, ուր թագաւորին և ազգին
 հաւատարմութեան երդումը տալով պի-
 տի պատկուէր. ուստի բոլոր մեհեաննե-

րը զարդարուած էին ոսկով, արծա-
 թով և ռսկեհուռն դիպակներով, որոնք
 այն օրը թագաւորը կընծայէր ի պատիւ
 և ի շնորհակալութիւն դից, մանաւանդ
 Վահագնի բազինը քան զամենը շքեղ
 էր: Ինքը Վահագնի մեհենի Վահագն տա-
 ճարին ներքին սրահին մէջ բարձրահա-
 սակ և վիթխարի ձուլածոյ ոսկի անդրի
 կանգնած էր արծաթի պատուանդանի
 վերայ. ճակատը թեւատարած արծիւ մը
 կտաւառնէր. ձեռքերէն սրածայր կայ-
 ծակներ կտեղար, և պատուանդանին
 տակը վեշապներ օտնձուած էին, որոց
 վերայ ահարկու աչքով կնայէր: Իսկ
 քրմապետը անդադար բազինը բորբոքե-
 լով սպիտակ ցլոյ մը եղջիւրներէն բըռ-
 նած թագաւորին և թագուհւոյն գալս-
 տեան կսպասէր:

Բայց թագուհւոյն առաքանտէն ոչ
 որ լուր չուներ. և մինչդեռ ամբոխը դի-
 ղուած մեհենին դուռը կսպասէր, թա-
 գաւորական ապարանից դռները ճանչե-
 լով ետէ ետե բացուեցան, արքունի
 արդուէր պահապանք զարհուրած ճա-
 նապարհ կրանան, և մէկ աղջիկ մը վա-
 ղեց դուռս ելաւ: Արնթանայ քաղաքին
 մէջ, զլուխը բաց, սեւագոյն մազերը խառն
 ի խուռն ուսերէն կախուած կծիւան, ըզ-
 գեստը պատուած, երկու ձեռքը ամ-
 փոված մերկութիւնը կծածկէ. ճանա-
 պարհին ոչ մէկ տեղ կանդ չառաւ, ոչ
 մէկու մը հետ խօսեցաւ, վազելով կեր-
 թայ:

Հասնինք ետեէն: Վաղաքին ծայրը
 հնձանքին մօտիկ ստուեր կերեւի. կենանք
 դիտենք, և տեսնենք թէ ո՞ր է. ինչո՞ւ
 տարածամ հոս կպտրաի: Ահա ձայն